ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ

ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

1.

Հեքիաթներն ընդհանրապես, այդ թվում նաև հայ ժողովրդական հեքիաթները, վիպական ժանրի ստեղծագործություններ են։ Իրենց բովանդակության և բնույթի համեմատ դրանք բաժանվում են երկու հիմնական խմբի. 1. Հրաշապատում կամ ֆանտաստիկական և 2. Իրապատում կամ ռեալիստական։ Այս բաժանումն, անշուշտ, պայմանական է, քանի որ առաջին կարգի հեքիաթների մեջ հաճախ դրսևորված են լինում իրական դեպքեր ու դեմքեր, իսկ երկրորդ կարգի հեքիաթներում էլ հոբելմն առկա են գերբնական առարկաներ ու երևույթներ։ Այդու հանդերձ, տվյալ բաժանումը հիմնականում ճիշտ պատկերացում է տալիս ժողովրդական հեքիաթների վերոհիշյալ խմբերի համար բնորոշ սյուժեների, մոտիվների և գաղափարական ու գեղարվեստական առանձնահատկությունների մասին։

Լինելով հրաշապատում, արկածային կամ կենցաղային բովանդակությամբ գեղարվեստական յուրօրինակ արձակ պատմություններ, հեքիաթներն ունեն իրենց որոշակի կառուցվածքն ու ոճը, պատկերավորման կայուն միջոցները (հատուկ սկսվածքներ, ընդմիջարկություններ, վերջավորություններ, կայուն էպիտետներ և այլն)։ Նրանց հիմնական մասի ժանրային ամենաբնորոշ հատկանիշը ստեղծագործական հնարանքի վրա հենված լինելու հանգամանքն է։ Հեքիաթներում պատկերված դեպքերն ու դեմքերը սովորական առումով քիչ հավաստի են, իսկ գործողության տեղն ու ժամանակն էլ անորոշ ու մտացածին։ Բնության և հասարակական կյանքի երևույթներն ու առարկաները այստեղ հաճախ հանդես են գալիս ֆանտաստիկ կերպարանքով, համեմված զանազան հրաշալիքներով։ Ոչ ինքը հեքիաթասացը, ոչ էլ նրա ունկնդիրները չեն հավատում պատմվածին։ Դրա լավագույն ապացույցը հեքիաթներից շատերի «եղել է, չի եղել» կամ «կար-չկար» երկբայական բանաձևի բնույթ ունեցող հայտնի սկսվածքներն են։ Եվ դա հասկանալի է, քանի որ հեքիաթների մի զգալի մասի մեջ հանդես եկող հրաշապատում կամ ֆանտաստիկական մոտիվները, կապված լինելով մարդկանց վաղնջական պատկերացումների ու հավատալիքների հետ, այլևս չեն համընկնում ժողովրդի նոր ըմբռնումներին ու հասկացություններին, ուստի և անհասկանալի ու անհեթեթ են թվում նրան։

Սակայն, սովորական առումով հաճախ անհավաստի ու անհավանական թվացող, վերոհիշյալ դեպքերն ու դեմքերը հեքիաթների մեջ միանգամայն տրամաբանական են ներկայանում գեղարվեստական և բարոյական տեսակետից և ձեռք են բերում սիմվոլիկ ու ընդհանրացնող նշանակություն։

Իրենց արմատներով գալով նախնադարյան-համայնական հասարակարգի խորքերից, հրաշապատում հեքիաթները հարատևել ու ապրել են նաև հասարակական հաջորդ տնտեսաձևերում, կրելով իրենց վրա վերջիններիս նկատելի ազդեցությունը։ Հնօրյա պատկերացումների ու հավատալիքների աստի-

ճանական փոփոխության, կյանքում առաջ եկած կենցաղային, հասարակական նոր երևույթների ու հարաբերությունների հետ մեկտեղ, նրանց մեջ մուտք են գործում նոր սյուժեներ ու մոտիվներ, նորոգ թեմաներ ու գաղափարներ, հեքիաթային երևակայությունը ավելի սերտորեն է կապվում իրական կյանքի հետ։

Առանձնապես ցայտուն է արտահայտված հեքիաթների մեջ նախորդ հասարակարգերի քայքայման հետևանքով առաջ եկած ֆեոդալական հարաբերությունների պատկերը։

Բնորոշ են այս տեսակետից այն հեքիաթները, ուր մենք տեսնում ենք մի կողմից՝ աշխատավոր խավերի ներկայացուցիչներին, հանձին՝ հողագործ գյուղացու, որսորդի, ձկնորսի, նախրորդի, ջուլհակի — իրենց կատարած դժվարին աշխատանքով և վարած ծանր կյանքով, մյուս կողմից՝ վերնախավի մարդկանց, հանձին՝ զանազան թագավորների, նազիր-վեզիրների, խանների ու մելիքների — իրենց կյանք ու կենցաղով, ուրիշ թագավորների հետ ունեցած պատերազմներով ու դավերով, պորտաբույծ վարք ու բարքով, հասարակ մարդկանց հանդեպ ցուցաբերած իրենց կամայականություններով։

Պակաս բնորոշ չեն նաև այն հեքիաթները, ուր երևան են գալիս առևտրական կապիտալի տիրապետության օրով իշխող հասարակական-տնտեսական, կենցաղային հարաբերություններն ու երևույթները. զանազան բազրկաններ, վաշխառուներ, սեղանավորներ, շարչիներ իրենց խարդախ գործարքներով, դեպի հեռավոր երկրները կատարած իրենց երկարատև, արկածալից քարավանային ճանապարհորդություններով։

Հեքիաթների երկարատև կյանքը պատահական երևույթ չէ։ Այն պայմանավորված է մի կողմից՝ նրանց մեջ արտահայտություն գտած փիլիսոփայական կարևոր ընդհանրացումներով, որոնք գալիս են ժողովրդի հազարամյա կյանքի սոցիալ-պատմական փորձից, մյուս կողմից՝ գեղարվեստական այն անթառամ պատկերներով ու կերպարներով, որոնց մեջ իրենց մարմնավորումն են գտել վերոհիշյալ ընդհանրացումները։

Հեքիաթների կենսունակության ու դարավոր հարատևության հետ են կապված նաև նրանց ժանրային-ստեղծագործական այնպիսի կարևոր առանձնահատկություններ, ինչպիսիք են սյուժեների հարաբերական կայունության և տարբերակների առաջացման երևույթները։ Հայտնի է, որ հեքիաթային սյուժեները, գոյատևելով բազում դարեր, համեմատաբար քիչ են ենթարկվել փոփոխություններին։ Նրանք հիմնականում պահպանել են իրենց գլխավոր հատկանիշները, իմաստաֆարուային մոտիվների զուգակցման իրենց ուրույն նկարագիրը։ Այդու հանդերձ. հեքիաթները չեն մնացել իբրև քարացած, միանգամ ընդմիշտ տրված ինչ-որ ստեղծագործություններ։ Դարերի հոլովումով նրանցից դուրս են ընկել առանձին մանրամասներ, վերջիններիս փոխարինել են ուրիշ մոտիվներ։ Դրա շնորհիվ գոյացել են հեքիաթային միևնույն սյուժեների բազմաթիվ նոր տարբերակներ, որոնք իրենց ընդհանուր նկարագրով նման լինելով իրար, միաժամանակ տարբերվել են իրարից կերպարների ու մոտիվների նոր երանգներով, նորոգ զուգակցումներով։

2.

Ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հայերի հեքիաթների դասական տեսակը կազմում են հրաշապատում կամ ֆանտաստիկական հեքիաթները։ Վերջիններս ոչ այլ ինչ են, բայց եթե «այն արտաքին ուժերի ֆանտաստիկ ար-

տացոլումը մարդկանց գլուխներում, որոնք իշխում են մարդկանց վրա նրանց ամենօրյա կյանքում։... Պատմության սկզբում այդպիսի արտացոլման առարկաներ են հանդիսանում ամենից առաջ բնության ուժերը, որոնք հետագա զարգացման ընթացքում զանազան ժողովուրդների մոտ երևան են գալիս դրանց ամենաբազմազան ու խայտաբղետ անձնավորումներով։ Բայց շուտով բնական ուժերի կողքին հանդես են գալիս նաև հասարակական ուժերը, որոնք հակադրվում են մարդուն և նույնքան օտար են ու սկզբնապես նրա համար նույնքան անբացատրելի, որքան և բնության ուժերը...։ Այն ֆանտաստիկ պատկերները, որոնց մեջ սկզբնապես արտացոլվում էին միայն բնության խորհրդավոր ուժերը, այժմ հասարակական հատկանիշներ էլ են ձեռք բերում և պատմական ուժերի ներկայացուցիչներ են դառնում»[1]։

Անհրաժեշտ է սակայն նշել, որ յուրաքանչյուր հրաշապատում հեքիաթի հիմքում, ինչքան էլ այն բեկված լինի ֆանտաստիկ պատկերների և սիմվոլիկ կերպարների մեջ, առկա են իրականության տարրերը։ Հեքիաթները ոչ միայն արտացոլում են իրականությունը, այլև դատավճիռ են կարդում վերջինիս նկատմամբ։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ չկա ֆանտազիա, որի ենթահողը իրական չլինի։

Հայկական հրաշապատում հեքիաթների հիմնական սյուժեների մեջ ցայտուն կերպով դրսևորված են նրանց ժանրային առանձնահատկությունները, բովանդակության մոտիվները, գեղարվեստական հատկանիշները և հասարակական-գաղափարական միտվածությունը։

Ահա մի քանի բնորոշ օրինակ։

Ա. Կրտսեր թագավորազնը հաջողությամբ կատարում է թագավոր հոր առաջարկած դժվարին խնդիրները, մի բան, որ չեն կարողանում գլուխ բերել իր ավագ ու միջնակ եղբայրները։ Նա սպանում է թագավորական այգու անմահական խնձորները հափշտակող գևին, բերում է հրաշալի Հազարան-բլբուլին, ճարում է կուրացած հոր աչքերի դեղը և այլն։ Ավագ և միջնակ թագավորազները, նախանձելով իրենց կրտսեր եղբորը, դավում են նրան և տիրանում նրա ձեռք բերածներին (Հազարան-բլբուլ, հրեղեն գեղեցկուհի և այլն)։ Ընկնելով «մութ աշխարհը», կրտսեր թագավորազնը սպանում է արծվի ձագերին հափշտակող և ժողովրդին ջրից զրկող ահռելի վիշապ-օձին, ձեռք է բերում յուսարձակ փետուրի տեր հրաշալի թռչունին, Ջինմաչինի թագավորի հրեղեն աղջկան, նորից դուրս է գալիս «լույս աշխարհ» և ուկերչի աշակերտի կամ Քաջալի կերպարանքով վերադառնում է հայրենիք։ Շատ չանցած պարզվում է թե՛ նրա ով լինելը և թե՛ նրա ավագ ու միջնակ եղբայրների դավադրությունը։ Կրտսեր թագավորազնը մեծահոգությամբ ներում է եղբայրներին, ամուսնանում է իր բերած հրեղեն հարսնացուի հետ և հոր փոխարեն բազմում է նրա գահին (տե՛ս «Հազարան-բլբուլ», «Ալո-Դինոս», «Անմահական խնձոր», «Հուրի-փերի թռչունը» հեքիաթները)։

Բ. Թագավորազնը տեսնելով գեղատեսիլ որբուհուն (Արևահատին, Վարդիթերին), սիրահարվում է և ամուսնանում է նրա հետ։ Որբուհու խորթ մայրը, չար պառավը, թագավորական վեզիրը և այլն, նախանձելով որբուհու բախտին, դավում են նրան (ծովը նետում, կուրացնում և այլն) և փոխարինում իրենց այլանդակ աղջիկներով։ Դեպքերի բարեբախտ բերումով, որբուհին հան-

[1] К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, հատ. 14, էջ 322։

վում է ծովից, բուժվում են նրա կուրացած աչքերը, և նա նորից բախտավորվում է գտնելով իր ամուսնուն։ Խորթ մայրը, չար պառավը, թագավորական ժեղիրը իրենց այլանդակ աղջիկների հետ միասին չարաչար պատժվում են (տե՛ս «Արևահատ ու Օձամանուկ», «Գառնիկ ախպեր», «Կարմիր կովը» հեքիաթները)։

Գ. Անզավակ ծնողները փողոցում գտած ձվից կամ դերվիշի տված խնձորներից օձի կամ մոզու կերպարանքով մի արու զավակ են ունենում։ Սա հասակ առնելով ուղարկում է ծնողներին թագավորի մոտ՝ իրեն համար կնության ուզելու նրա աղջկան։ Թագավորը երեք ծանր պայման է առաջարկում։ Տղայի միջոցով կատարվում են թագավորի պայմանները և նա տալիս է իր աղջկան։ Ապրելով կնոջ հետ, տղան գիշերները մարդ է դառնում, իսկ ցերեկները մտնում է օձի կամ մոզու պատյանի մեջ։ Թագավորի աղջիկը ամուսնու բացակայության միջոցին այրում է նրա կենդանական պատյանները, որպեսզի նա այլևս կերպարանափոխվի։ Տեսնելով այդ, ամուսինը սաստիկ վրդովվում է և, լքելով կնոջը, հեռանում է տնից։ Մեծ տառապանքների գնով թագավորի աղջիկան հաջողվում է վերադտնել իր ամուսնուն, որից հետո նրանք նորից սկսում են ապրել հաշտ ու երջանիկ կյանքով (տե՛ս «Հարրման», «Մոզին» հեքիաթները)։

Դ. Արհեստ սովորելու նպատակով, ծնողները իրենց տղային (աղջկան) տալիս են աղբյուրի ակում ապրող կախարդ ծերուկին (Օխիկ, Ուխայ բարի և այլն)։ Սա իր աշակերտին սովորեցնում է թռչունի և կենդանու փոխակերպվելու արհեստը։ Ուսումն ավարտելուց հետո աշակերտն ուզում է տուն վերադառնալ, սակայն ուսուցիչը թույլ չի տալիս, վախենալով, որ նա կտարածի իր արհեստի գաղտնիքը։ Աշակերտը կախարդ ծերուկի տղայի (աղջկա) օժանդակությամբ մի կերպ դուրս է սողոսկում աղբյուրի ակից։ Կախարդ ծերուկը զանազան թռչունների ու կենդանիների կերպարանքներ ընդունելով հետապնդում է նրան։ Աշակերտը նույն միջոցին դիմելով ազատվում է նրա հետապնդումներից և ի վերջո, ոչնչացնելով կախարդ ծերուկին, վերադառնում է տուն (տե՛ս «Օխիկը», «Աղբյուրի հարսը» հեքիաթները)։

Ե. Ձկնորսի աշակերտը (թագավորազնը) խղճահարվելով նորից ծովն է նետում իր բռնած դեղեցիկ ոսկեգլուխ) ձկանը։ Ժամանակ անց հիշյալ ձուկը անծանոթ օտարականի (արարի) կերպարանք մտած հայտնվում է իր բարերարին, պատասխանում նրան առաջարկված բարդ հարցերին, փրկում զանազան դժվարին կացություններից և այլն։ Երբ ձկնորսի աշակերտը (թագավորազնը) ուզում է հատուցել անծանոթ օտարականին (արարին) նրա արած լավությունների համար, սա հայտնում է, որ ինքը այն ձուկն է, որին նա ժամանակին ազատ էր արձակել և հիշեցնում է՝ «Լավություն արա, ղղի ջուրը, աստված չիմանա — ձուկը կիմանա» առածը (տե՛ս «Խոսող ձուկը», «Ոսկեգլուխ ձուկը» հեքիաթները) և այլն։

Սյուժեների նման առանձնահատուկ բնույթ ունեն նաև հայկական հրաշապատում հեքիաթների գործող անձինք։ Դրանք են.

Բնության գարթոնքի ու գարնան անձնավորում Հազարան բլբուլը, որի երգով կանաչում է չորացած այգին։

Երաշտի ու չարության խորհրդանիշ վիշապ-օձը, որն ապրելով գետերի ու աղբյուրների ակունքում, խանգարում է մարդկանց օգտվելու ջրից։

Ջերմության ու լույսի աղբյուր, արևի անվանակից ոսկեվարս ու գեղեցիկ Արևահատը, որը հակառակ խավար ու չար ուժերի նյութած բոլոր դավերին, դառնում է իր բախտի տերը։

Պողպատե մարմնով անհեղեղ հրեշը (Ջանփոլատ), որին հաղթելու միակ միջոցը ուրիշ առարկաների ու լակների մեջ գտնվող նրա հոգին խոցելն է։

Երեք, յոթ և ավելի գլխանի Սպիտակ, Սև և Կարմիր դևերը, խարդախ ու չար պառավները, թռչունի թևերով և մարդկային լեզվով օժտված ծովերի կամ քարայրների մեջ ապրող հրեղեն ձիերը և այլն։

Հայկական հրաշապատում հեքիաթների կենտրոնական դեմքը, նրանց հիմնական հերոսը ժողովրդի մարդն է, իր ուրույն հոգեբանությամբ ու բնավորությամբ, իր պայքարով ու ոգորումներով։ Տարբեր ստեղծագործությունների մեջ նա հանդես է գալիս ու գործում է տարբեր անունների տակ, տարբեր կերպարանքներով։ Մի տեղ, օրինակ, դա որսորդի որդին է կամ հենց ինքը որսորդը, մի ուրիշ տեղ՝ հովիվը կամ նրա տղան, մի երրորդ տեղ՝ ձկնորսը, կամ հողագործ գյուղացին, ուրիշ դեպքերում՝ խեղճ ցախահավաքը, իմաստուն ջուլհակը և այլն։ Ժողովրդական այդ բոլոր հերոսները աչքի են ընկնում իրենց ազնվությամբ, բարությամբ, աշխատասիրությամբ, խելքով, շնորհքով, համարձակությամբ և ֆիզիկական ու հոգեկան ուրիշ բարեմասնություններով։ Նրանք մեծ համառությամբ ու հետևողականությամբ հաղթահարում են իրենց ճանչն ծառացած դժվարություններն ու խոչընդոտները, անձնական ջանքերով ստեղծում ապահով ու երջանիկ կյանքի պայմաններ։ Այդպիսիք են հրաշապատում հեքիաթների ոչ միայն տղամարդ, այլև կին հերոսները, որոնք նույնպես հանդես են գալիս իբրև գեղեցկության, խելքի, ուժի, բարոյական բարձր սկզբունքների կենդանի մարմնացումներ՝ հիանալիորեն բացահայտելով ժողովրդի պատկերացումները իդեալական կնոջ վերաբերյալ։

Հրաշապատում հեքիաթների մեջ իբրև գլխավոր հերոս բավական հաճախ հանդես է գալիս նաև կրտսեր թագավորազնը, որն այստեղ սովորաբար հակադրվում է իր ավագ ու միջակ եղբայրներին։ Որսորդի, ձկնորսի, հովվի, գյուղացու զավակների և մյուսների նման նա հակամարտության մեջ է զանազան թագավորների, նազիր-վեզիրների, իշխանների, մելիքների, խանների, բեգերի հետ, մերկացնում, չարաչար պատժում ու պարտության է մատնում վերջիններիս։ Կրտսեր թագավորազնի՝ հեքիաթի հերոս դառնալու կամ ավելի ճիշտ՝ այդ հերոսի կրտսեր թագավորազն կոչվելու հանգամանքը ամենայն հավանականությամբ պետք է բացատրվի այն հայացքով, որ ունեցել է ժողովուրդն առհասարակ կրտսեր զավակների վերաբերյալ, իբրև ընտանիքի ամենաերիտասարդ, հետևաբար և ամենից ավելի կենսունակ, կարելիություններով լի և առավել սիրված մի արարածի։ Հեքիաթի հերոս դարձնելով կրտսեր թագավորազնին և հակադրելով նրան իր թագավոր հորը, ավագ ու միջնակ թագավորազն եղբայրներին, ժողովուրդը դրանով կարծես դիմել է յուրահատուկ այլաբանության՝ դրսևորելու համար սոցիալական սանդուխքի ստորին, միջին և վերին աստիճանների միջև գոյություն ունեցող անջրպետը, դրանց հակամարտությունն ու պայքարը։

Կրտսեր թագավորազնի հերոսացման պատճառներից մեկն էլ, հավանորեն, եղել է այն, որ ժողովրդի երազանքը ազատ, ուժեղ ու անկախ մարդու մասին անցյալում խոր հակասության մեջ է գտնվել նրա իրական կյանքի ծանր պայմանների և ճնշված ու իրավազուրկ վիճակի հետ։ Դրա համար էլ ահա նա

իր այդ երազանքը երբեմնապես մարմնավորել է նման կերպարների մեջ, իրրև հասարակական դիրքով ավելի անկախ ու ապահով և իրենց վարմունքի ու գործելակերպի մեջ անկաշկանդ մարդկանց, որոնց միջոցով ինքը հեշտությամբ կարող էր իրականացնել սեփական ձգտումներն ու երազանքները։

Որ կրտսեր թագավորազնը ըստ էության բուն ժողովրդական հերոս է, պերճախոս կերպով հաստատվում է այն սերտ կապով ու համագործակցությամբ, որ նա հանդես է բերում հեքիաթների մեջ՝ քաղաքների արվարձաններում ապրող աղքատ բարի պառավների, ճանապարհների խաչմերուկներում հանդիպող իմաստուն ծերունիների և նմանների հետ, լսելով վերջիններիս խորհուրդները և վայելելով նրանց օժանդակությունն ու պաշտպանությունը։ Պակաս պերճախոս ապացույց չէ նաև այն հանգամանքը, որ կրտսեր թագավորազնը հեքիաթների մեջ մեծ մասամբ անտեսված ու հալածված է թագավորների և մյուս թագավորազների կողմից, օժտված է հասարակ մարդկանց հատուկ բնավորության գծերով, նրանց հոգերանությամբ ու հայացքներով։

Տարբերվելով իրարից սյուժեներով, գործող անձերով և հերոսներով, հրաշապատում հեքիաթները մոտ ու նման են իրար իրենց հասարակական-գաղափարական լիցքով։ Նրանց բոլորի մեջ էլ, տարբեր ձևերով ու երանգավորմամբ, դրսևորված են մարդկանց լավագույն ձգտումներն ու երազանքները առատության, երջանկության, խաղաղության, համերաշխության, ազատ ու անկաշկանդ կյանքի ու աշխատանքի, ծերության և զանազան հիվանդությունների դեմ պայքարելու անհրաժեշտության մասին։ Նրանց բոլորի մեջ էլ, տարբեր ձևերով, արձագանք են գտել այն ճիգերն ու ջանքերը, որ գործադրել են մարդիկ այդ ձգտումներն ու երազանքները ի կատար ածելու, շրջապատի բնության և հասարակական կյանքի շար ուժերը ճանաչելու, դրանք հաղթահարելու և առհասարակ իրականությունը վերափոխելու ուղղությամբ։

Մարդկային վերոհիշյալ ձգտումների ու երազանքների հեքիաթային ուրույն խորհրդանիշներից են.

Հոչակավոր կախարդական սփոցը, որին տիրապետողը ուզած դեպքում ունենում է անհրաժեշտ քանակությամբ ուտելիք ու խմելիք։

Հրաշագործ թասը, որը ձեռք բերողը ամենակարճ ժամանակում դառնում է հարուստ ու ապահով մարդ։

Կախարդական աշտանակը, որի գաղտնիքին տիրապետողը իր օրն անց է կացնում երգով ու պարով, գեղեցիկ աղջիկների շրջապատում։

Հրաշագործ երկանքը, որն ունեցողը ընդմիշտ ազատվում է հացի ծանր հոգսից և ապրում է առատության ու լիության մեջ, և շատ ուրիշ կախարդական առարկաներ ու նյութեր (անմահական ջրեր ու խնձորներ, խոտեր ու պտուղներ), որոնց շնորհիվ մարդը դառնում է երիտասարդ ու գեղեցիկ, բուժվում ծանր ախտերից ու հիվանդություններից։

Ապահով ու երջանիկ կյանքի հասնելու մարդկային ձգտումը հրաշապատում հեքիաթների մեջ սերտորեն շաղկապված է մարդու կողմից բնության գաղտնիքները բմբռնելու, նրա ուժերին տիրապետելու և դրանք իր կենսական շահերին ծառայեցնելու անհրաժեշտության գիտակցության հետ։

Հեքիաթային հոչակավոր բոչող գորգը, որի միջոցով հերոսը կամ հերոսուհին մի ակնթարթում կտրում, անցնում է հսկայական տարածություններ, փրկվելով վերահաս ահեղ վտանգից կամ էլ շտապ օգնության է հասնում ծանր վիճակի մեջ եղողներին, ջրի վրա թռչող կախարդական կոշիկները, ո-

ոնց •գնությամբ նրանք ազատվում են թշնամական հետապնդումներից, ժամանակին հասնում իրենց նպատակներին, և էլի ուրիշ կախարդական առարկաներ, հին մարդկանց վերոհիշյալ գիտակցության ցայտուն արտահայտություններն են։ Դրանց մեջ դրսևորված են ժողովրդի՝ մատերիալիստական հիմքեր ունեցող սուր միտքն ու դեպի հեռուները սավառնող երևակայությունը, գիտության ու տեխնիկայի ապագա խոշորագույն նվաճումները կանխակոահելու նրա ընդունակությունները։

Ինչպես կյանքում, այնպես էլ հրաշապատում հեքիաթների մեջ, մարդկային լավագույն ձգտումների ու երազանքների իրականացումը կատարվում է հրկարատև ու համառ պայքարի միջոցով։ Եվ դա բնական ու հասկանալի է, քանի որ այդ ձգտումներն ու երազանքները դարեր շարունակ հակասության մեջ են եղել մի կողմից բնության և մյուս կողմից՝ տիրող հասարակական ամենակարող ու բազմագլխ չար ուժերի հետ։

Հրաշապատում հեքիաթների մեջ ցայտուն անդրադարձում գտած «չարի» ու «բարու» կռիվը այդ պայքարի սիմվոլիկ արտահայտությունն է, անձնավորված համապատասխան հեքիաթային բացասական ու դրական կերպարների մեջ։

Հիշենք, իբրև օրինակ, «Հազարան բլբուլ» հայտնի հեքիաթը, ուր չարի կրողներն են անմահական խնձորները հափշտակող զազրելի դեր, ջուրն արգելող հսկայական վիշապը, պողպատամարմին անհեղեղ հրեշը, իսկ բարուներ՝ հնարամիտ ու անվեհեր կրտսեր թագավորազն կամ գեղջուկ Ալո-Դինոն։

Հիշենք «Արևահատ և Օձամանուկ» հեքիաթը, ուր չարի կրողներն են նախանձ ու դավադիր խորթ մայրը և սրա այլանդակ աղջիկը, իսկ բարուները՝ ազնիվ, գեղեցիկ ու անմեղ Արևահատը։

Հիշենք «Որսորդի զավակը» հեքիաթը, ուր չարը հանդես է գալիս հանձին կամայական ու անգութ թագավորի և ագահ ու նախանձ վեզիրի, իսկ բարին՝ հանձին հնարամիտ ու համարձակ որսորդի տղայի, և այլն, և այլն։

Հրաշապատում հեքիաթների մեջ չարի և բարու պայքարը սովորաբար վերջանում է բարու հաղթանակով, չնայած այն հանգամանքին, որ կյանքում միշտ չէ, որ հաղթել է վերջինս։ Այս շեղումը իրականությունից իր հիմքերն ունի դարձյալ նույն իրականության մեջ։ Ժողովրդի լավատեսության ու առողջության, սեփական անպարտելի ուժի ու վերջնական հաղթանակի վերաբերյալ նրա ունեցած վառ հավատի ցայտուն արտահայտությունն է դա, որը շեշտված կերպով երևան է գալիս ոչ միայն հեքիաթների, այլև նրա բանավոր ստեղծագործության շատ ուրիշ հուշարձանների մեջ։ Ճիշտ է նկատված, որ ավանդական բանահյուսությանը կատարելապես խորթ է հոռետեսությունը, չնայած այն փաստին, որ նրա ստեղծողները ծանր կյանք են ունեցել և նրանց տանջալից ստրկական աշխատանքը իմաստազուրկ են դարձրել շահագործողները, իսկ անձնական կյանքը եղել է իրավազուրկ ու անպաշտպան։ Սակայն, չնայած այդ բոլորին, կոլեկտիվին հատուկ է եղել անմահության գիտակցությունը և այն համոզումը, թե նա կհաղթանակի իրեն թշնամի բոլոր ուժերին։

Ահա թե որտեղից է գալիս հրաշապատում հեքիաթներին հատուկ դեպի պայքար ոգեկոչող առնական ռոմանտիզմը, ահա թե ինչու նրանց մեջ պատ-

2 Մ. Գորկի, Սովետական գրականության մասին, Երևան, 1934, էջ 32—33։

կերված է մի աշխարհ, ուր գոյություն ունի և երագելով լավագույն կյանքի մասին, գործում է մի ինչ-որ ազատ, անվնհեր ուժ։

Հրաշապատում հեքիաթների բնույթին ու բովանդակությանը միանգամայն համահնչուն է նաև նրանց արվեստը։ Այդ հեքիաթները աչքի են ընկնում իրենց գրավիչ պատմելաձևով և ոճով, հիպերբոլիկ պատկերներով, խոսուն չնչավորումներով և գունեղ անձնավորումներով, հետաքրքրաշարժ ինտրիգներով ու կոլիզիաներով, դինամիկ զարգացող հարուստ սյուժեներով, «տիտանական ընդհանրացումների» (Մ. Գորկի) հասնող սիմվոլիկ կերպարներով։ Ի տարբերություն գրական կերպարների, որոնք սովորաբար հանդես են գալիս իրենց զարգացման ու լինելիության հոգեբանական պրոցեսի մեջ, հրաշապատում հեքիաթների կերպարները մարդկային որոշակի գծեր ու հատկություններ խտացնող միանգամ ընդմիշտ տրված պատրաստի ու ամբողջական տիպեր են։

3.

Հրաշապատում հեքիաթներից բացի Հայաստանում դարերի ընթացքում ստեղծվել ու սերնդից-սերունդ պատմվել են նաև շատ թվով իրապատում կամ ռեալիստական հեքիաթներ։ Իրենց ծագումով դրանք հիմնականում կապվում են ֆեոդալական հասարակարգի հետ և արտացոլում են վերջինիս պայմաններում գոյություն ունեցող տնտեսական, սոցիալական, իրավական, կենցաղային երևույթներն ու հարաբերությունները։

Իրապատում հեքիաթների գլխավոր տարբերը՝ աշխարհիկ ու հոգևոր հարստահարիչների մարդկային և հասարակական բացասական գծերի մերկացումն ու քննադատությունն է՝ մի կողմից, և աշխատավոր մարդկանց արժանիքների գրվատիրը՝ մյուս կողմից։ Զանազան թագավորների ու իշխանների, գյուղական ու քաղաքային տեսակ-տեսակ ցեցերի, աստիճանավոր ու շարքային հոգևորականների պորտաբույծ վարք ու բարքին այստեղ հակադրված են հովիվների ու որսորդների, գյուղացիների ու արհեստավորների աշխատասիրությունն ու ազնվությունը, խելքն ու շնորհը։

Դրա հետ զուգընթաց, նույն հեքիաթներում անողոք քննադատության ու ծաղրի են ենթարկված պարծենկոտությունը, ստախոսությունը, ծույությունը, ագահությունը, գողությունը, անբարոյականությունը և այլն։

Հրաշապատում հեքիաթների պես իրապատում հեքիաթները ևս ունեն իրենց ուրույն սյուժեները, որոնց մեջ հարազատորեն արտացոլված են նրանց ժանրային նկարագիրը, բովանդակության ու արվեստի առանձնահատկությունները, հասարակական-գաղափարական միտվածությունը։

Ահա մի քանի բնորոշ օրինակ։

Ա. Աղքատ մարդը, հասարակ ջուլհակը, դերձակը իրենց հնարամտության ու շնորհքի օգնությամբ պատասխանում են թագավորի դժվար հարցերին և կատարում նրա պահանջած բարդ գործերը, որոնք մինչ այդ չէին կարողացել անել պալատական իմաստունները, նագիր-վեզիրները ու թագավորազները։ Տեսնելով այդ, թագավորը լի ու լի վարձատրում ու գրվատում է աղքատ մարդուն, հասարակ ջուլհակին, դերձակին, իսկ պալատական իմաստուններին, նագիր-վեզիրներին ու թագավորազներին էլ՝ նախատում ու պատժում իրենց

[3] М. Горький, О литературе, М., 1937, էջ 171։

նախանձի ու անճարակության համար (տե՛ս «Իմաստուն ջուլհակը», «Խելացի բաժանարարը», «Թագավորի հարցերին պատասխանողը», «Վերմակիդ համեմատ ոտներդ մեկնիր», «Սուտ ասաներ» հեքիաթները)։

Ռ. Թագավորազնը հավանում է հասարակ գյուղացու, դերձակի գեղեցիկ աղջկան և ուզում է, ինչ գնով լինի, տիրանալ նրան։ Սակայն հասարակ գյուղացու, դերձակի աղջիկը չի ենթարկվում թագավորազնին։ Բարձր պահած իր արժանապատվությունը, նա հաղթում է թագավորազնին և կատարել է տալիս նրան իր կամքը (տե՛ս «Փնշակը ոսկի է», «Դերձակի աղջիկը» հեքիաթները)։

Գ. Տերը անգթորեն հարստահարում, նեղում ու վիրավորում է ծառային։ Ծառան կամ սրա եղբայրը վրիժառու են լինում տիրոջից՝ լավ խայտառակում նրան և տիրանում նրա ունեցվածքին ու կնոջը (տե՛ս «Էրոն ու Տերոն», «Նոքար Սիմոնը» հեքիաթները)։

Դ. Քահանան եկեղեցում քարոզելիս խրատում է ժողովրդին՝ լինել առատաձեռն, բարոյական, օրինակելի վարք ու բարքի տեր։ Աղքատը, պառավ կինը խայտառակում են քահանային, ցույց տալով, որ նա կյանքում իր քարոզածի հակառակն է անում (տե՛ս «Քահանային խայտառակող պառավը», «Մանթանաթի սարերը» հեքիաթները)։

Ե. Կինը խորամանկորեն տնից վտարում է իր ծույլ ու անպետք ամուսնուն։ Ջանագան բարեհաջող դիպվածների բերումով վերջինս իմաստունի, հերոսի համբավ է ձեռք բերում և արժանանում է մեծ փառքի ու պատվի (տե՛ս «Դժիկոն», «Ծույլ ամուսիներ» հեքիաթները)։

Իրապատում հեքիաթների գործող անձինք են՝ ուրիշի հաշվին ապրող աղան, ռեսը, խարդախ վաճառականը, ագահ ու որկրամոլ քահանան, կաշառակեր դատավորը, աշխատասեր կամ ծույլ կանայք ու տղամարդիկ, հավատարիմ, համեստ կամ դավաճան ու փառասեր կանայք, հիմար կամ խելոք եղբայրներն ու քույրերը և այլն։

Նույն հեքիաթների հերոսներն են՝ ջանասեր գյուղացին, ազնիվ արհեստավորը, չարաչար հարստահարված ծառան, հնարամիտ աղքատը, իմաստուն ջուլհակը և այլն։

Իրապատում հեքիաթներում իսպառ բացակայում է հրաշապատում հեքիաթների հերոս կրտսեր թագավորազնը։ Եվ դա պատահական չէ։ Հրաշապատում հեքիաթները ստեղծվել են պատմական մի ժամանակաշրջանում, երբ ժողովուրդը դեռևս լիովին չէր գիտակցել իր հասարակական կշիռը։ Կրտսեր թագավորազնի հերոսացումը հետևանք էր նրա աշխարհայացքի պատմական այդ սահմանափակության։ Իրապատում հեքիաթները ձևավորվել են այնպիսի ժամանակ, երբ հասարակական կյանքում տեղի ունեցած համապատասխան տեղաշարժերի հետևանքով (դասակարգային հակամարտությունների սրում, գյուղացիական խռովությունների առաջացում և այլն) արթնացել էր ժողովրդի ինքնագիտակցությունը և նա արդեն սկսել էր զգալ իր ուժը։ Հասարակ մարդու՝ հեքիաթի հիմնական հերոս դառնալու հանգամանքը ժողովրդական լայն զանգվածների պատմական այդ զարթոնքի հետևանքն էր։ Ճիշտ է, հրաշապատում հեքիաթների մեջ էլ, ինչպես նշվեց վերևում, կրտսեր թագավորազնի հետ իբրև գլխավոր գործող անձ կամ հերոս երբեմն հանդես են գալիս նաև ներքնախավի որոշ ներկայացուցիչներ (ռրսորդը, ձկնորսը, ոսկերչի աշակերտը և այլն), սակայն նրանք տվյալ դեպքում չունեն իրապատում հե-

թիաթների հերոսների ռեալիստական նկարագիրը և գերազանցապես ֆանտաստիկ ու սիմվոլիկ կերպարներ են։

Հրաշապատում հեքիաթների նման իրապատում հեքիաթների հասարակական-գաղափարական հիմնական բովանդակություն կազմում են ապահով ու երջանիկ կյանքի ժողովրդական երազանքն ու ձգտումը և այն տեսական, հաստատ պայքարը, որ մղել է նա դարերի ընթացքում իր այդ երազանքին հասնելու համար։ Տարբերությունը միայն այն է, որ մինչդեռ առաջին դեպքում ժողովրդի ձգտումներն իրականանում են գլխավորապես բնության «չար» ուժերի դեմ տարվող պայքարի միջոցով, երկրորդ դեպքում նույն այդ պայքարը հիմնականում ուղղված է սոցիալական կյանքի «չար» ուժերի դեմ։

Իրապատում հեքիաթները ամբողջապես ներթափանցված են աշխատանքային գաղափարախոսությամբ։ Աշխատանքի նկատմամբ իրենց ունեցած վերաբերմունքով են ըստ էության նմանվում իրար և տարբերվում իրարից այդ հեքիաթների գլխավոր ու երկրորդական բոլոր գործող անձինք։ Աշխատանքն է հանդիսանում նրանց բոլորի փոխհարաբերության շարժիչ ուժը։

Իրապատում հեքիաթների արվեստը պայմանավորված է նրանց բովանդակությունը կազմող սոցիալ-կենցաղային թեմաներով, իրական առարկաներով ու երևույթներով, մարդկային-հասարակական առօրեական հարաբերություններով։ Դրանք սովորական կարճառոտ պատմություններ են, որոնց համար բնորոշ է գործողության միասնականությունը, լարուն սյուժեն, կոնֆլիկտային բնույթի միջադեպերը, գործող անձանց հակադրականությունը (տեր և ծառա, աշխատասեր ու ծույլ, խելոք և հիմար, բախտավոր ու անբախտ և այլն), նրանց հոգեֆիզիկական հատկությունների և կատարած արարքների մանրամասն բնութագրումների ու պատճառաբանության բացակայությունը։

Իրապատում հեքիաթները աչքի են ընկնում նաև իրենց կենդանի ու անբրոնազրոս երկախոսություններով, հասարակ, պարզ լեզվով ու ոճով, դիպուկ արտահայտություններով և սրամիտ բառախաղերով։

4.

Հեքիաթների մեծ մասը առհասարակ կազմում են ընդհանուր կամ միջազգային ստեղծագործությունները։ Դրանք այն հեքիաթներն են, որոնց զուգահեռները առկա են էթնիկապես և աշխարհագրորեն տարբեր ազգերի անգիր բանահյուսության մեջ, և որոնք նման են իրար ինչպես իրենց սյուժեներով, գործող անձերով ու հերոսներով, այնպես էլ հասարակական-գաղափարական բովանդակությամբ։

Հիշյալ կարգի հեքիաթների առկայությունը բացատրվում է.

ա. Տարբեր ժողովուրդների անցած պատմական զարգացման համանման ճանապարհով, նրանց ապրած բնական, տնտեսական ու հասարակական ընդհանուր պայմաններով և այս վերջինների վրա խարսխված կենսաձևերի, մարդկային հոգեբանության ու աշխարհայացքի նմանությամբ։

բ. Արևելքի ու Արևմուտքի մի շարք ժողովուրդների միջև դարերի ընթացքում կատարված տարբեր տիպի շփումներով ու միջազգային փոխազդեցություններով (Ալեքսանդր Մակեդոնացու, արաբների և խաչակրաց արշավանքները, երկարատև առևտրական հարաբերություններ և այլն), և

գ. Ցեղակից ազգերի ծագումնաբանական արմատներից եկող ընդհանուր ժառանգությամբ

Հայկական հեքիաթների մեջ առկա վերոհիշյալ կարգի ստեղծագործությունների բնորոշ օրինակներից են.

1. «Հազարան բլբուլը», որի զուգահեռները կան պարսկական, թաթարական, ռուսական, գերմանական և մի շարք ուրիշ ժողովուրդների հեքիաթների մեջ[4]։

2. «Ոլիվիկը», որի զուգահեռները կան պարսկական, աբխազական, մեգրելական, ռուսական, գերմանական և մի շարք ուրիշ ժողովուրդների հեքիաթներում[5]։

3. «Տղա դարձող աղջիկը», որի զուգահեռները կան կաբարդինական, աբխազական, հունական, ռումինական, հին-իռլանդական, ֆիննական, նորվեգական, իտալական և ուրիշ ժողովուրդների հեքիաթներում[6]։

4. «Դժիկոն», որի զուգահեռները կան պարսկական, թաթարական, վրացական, աբխազական, մեգրելական, չեչենական, թալիշական, ռուսական, գերմանական, հարավ-ամերիկյան և ուրիշ ժողովուրդների հեքիաթներում[7]։

5. «Փեշակը ոսկի է», որի զուգահեռները կան պարսկական, արաբական, վրացական, կաբարդինական և ուրիշ ժողովուրդների հեքիաթներում[8]։

6. «Նրեմ եղբայրները», որի զուգահեռները կան վրացական, հնդկական, արաբական և ուրիշ ժողովուրդների հեքիաթներում[9] և այլն։

Հեքիաթներում միջազգային ստեղծագործությունների հետ մեկտեղ կան նաև զուտ տեղական կամ ազգային ստեղծագործություններ։ Դրանք այն հեքիաթներն են, որոնց զուգահեռները բացակայում են ուրիշ ժողովուրդների հեքիաթներում։

Եթե ընդհանուր կամ միջազգային կոչված հեքիաթներում ազգային բնույթ ունեն միայն հեքիաթային կերպարներին տրված ուրույն մեկնաբանությունները, կենցաղային նկարագրությունների բնորոշ մանրամասները, գործող անձանց ու հերոսների վարքագծի առանձին դրվագները, ապա տեղական կոչ-

---

[4] „Персидские народные сказки", М.—Л., 1934, էջ 86—90. „Сборник материалов для описания местностей и племен Кавказа", պրակ 26, բաժ. 2, էջ 95—104; Н. П. Андреев, Указатель сказочных сюжетов, Л., 1929, № 551; Bolte-Polivka, Anmerkunden zu den Kinderung Hausmarchen der Brüder Crimm, 1913—1918, II, 97.

[5] „Персидские народные сказки", М.—Л., 1934, էջ 303—311; „Абхазские народные сказки", Сухуми, 1935, էջ 114—119; „Сборник материалов...", պրակ 10, բաժ. 2, էջ 110—118, Н. П. Андреев, Указатель, № 325, 563; Bolte-Polivka, I, 36, II, 68.

[6] „Сборник материалов...", պրակ 34, բաժ. 4, էջ 6—14; „Абхазские сказки", էջ 160—165; Н. П. Андреев, Указатель, № 328, 531.

[7] „Персидские народные сказки", էջ 387—394; „Сборник материалов...", պրակ 6, բաժ. 2, էջ 109—118, պրակ 13, բաժ. 2, էջ 295—296, պրակ 23, բաժ. 3, էջ 13—18; „Грузинские сказки", էջ 362—373; „Абхазские сказки", էջ 85—87, 90—92, 183—186, 210—216; „Сборник материалов...", պրակ 24, բաժ. 2, էջ 39—42, պրակ 22, բաժ. 3, էջ 4—12, պրակ 6, բաժ. 2, էջ 109—118; Н. П. Андреев, Указатель № 1640; Bolte-Polivka, I, 20.

[8] „Персидские народные сказки", էջ 67—70; Chauvin V., Bibliographie des ouvrages arabes, VI. Liege, 1904, էջ 72—73, № 239; „Грузинские сказки", էջ 393—395; „Сборник материалов...", պրակ 27, բաժ. 4, էջ 1—8.

[9] „Восточные записки", 1895, էջ 221—239; Минаев, Индийские сказки, СПб., 1877, էջ 69—79, № 391; Chauvin, VI, էջ 158—161, № 138.

ված հեքիաթները ըստ ամենայնի ազգային ստեղծագործություններ են թե՛ իրենց բովանդակությամբ, գաղափարական կողմով և թե՛ ձևական առանձնահատկություններով, սյուժետային մոտիվների ու կերպարների տիպաբանական խաչավորումներով։

Ստեղծված ու մշակված լինելով տեղական հողի վրա, նշված հեքիաթները ճշմարտացիորեն արտացոլում են տվյալ երկրի բնա-ֆիզիկական առանձնահատկությունները, նրա բնակիչների պատմական ճակատագիրը, կենցաղը, բարքերը, աշխարհայացքը, հոգեբանությունը, ազգային բնավորության բնորոշ գծերը։

Հայ ժողովրդի ստեղծած ազգային կամ տեղական հեքիաթների ցայտուն նմուշներից է «Օձն ու աղքատը» խորագրով ուշագրավ հեքիաթը, որի մեջ պատմըվում է, թե ինչպես մի թագավոր երազում առաջին անգամ տեսնում է, որ երկնքից աղվեսներ են թափվում, երկրորդ անգամ՝ արյուն, իսկ երրորդ անգամ՝ գառներ։ Նա մեծ քանակությամբ ոսկի է խոստանում այն մարդուն, ով կկարողանա մեկնել իր երազների իմաստը։ Կնոջ ստիպմամբ աղքատ գյուղացին գնում է թագավորի երազները մեկնելու։ Ճանապարհին պատահում է օձին, որը տալիս է նրան թագավորի երազների մեկնությունը, պայմանով, որ ըստացված ոսկուց իրեն էլ բաժին հանվի։ Օձի թելադրանքով աղքատ գյուղացին հայտնում է թագավորին, որ նրա առաջին երազը (երկնքից աղվեսներ թափվելը) նշան է, որ կյանքում իշխելու են նենգ ու խորամանկ մարդիկ. երկրորդ երազը (երկնքից արյուն թափվելը) նշան է, որ կյանքում կռիվ ու արյունահեղություն է լինելու. երրորդ երազը (երկնքից գառներ թափվելը) նշան է, որ կյանքում հաշտություն ու խաղաղություն է տիրելու։

Հակառակ օձին տված իր խոստման, գյուղացին առաջին անգամ խաբում է նրան և ոչինչ չի տալիս, երկրորդ անգամ փորձում է սպանել նրան, և միայն երրորդ անգամ, զղջալով իր վարմունքի համար, գալիս է օձի մոտ և ուզում է բաժանել վերջինիս հետ իր ստացած բոլոր ոսկիները։

Սակայն օձը հրաժարվում է ընդունել գյուղացու առաջարկած ոսկիները, ասելով, որ ինքը ներում է նրան, քանի որ այդպես է թելադրել նրան ոչ թե իր անձնական կամքը, այլ ժամանակների ոգին։

Այս խիստ ուշագրավ հեքիաթի մեջ հավաստվում է այն ճշմարտությունը, ըստ որի մարդու կատարած վատ կամ բարեսական գործողությունները կախված են ոչ թե նրա անձնական մտադրություններից ու ցանկություններից, այլ այն հասարակական, կենցաղային ու բարոյական միջավայրից ու պայմաններից, որի մեջ գտնվում է նա։

Ազգային կամ տեղական բնույթի նմանօրինակ մի ուրիշ ստեղծագործություն է «Դատ ու բեղատ» խորագրով հետևյալ ինքնատիպ ու խորունկ հայկական հեքիաթը։

Երեսուն տարի շարունակ իր տերերին ծառայելուց հետո նախրորդը վերջում բոլորովին ձեռնունայն է մնում։ Մի օր նա պատահմամբ գանձ է գտնում։ Մեսի մարդիկ խլում են նրանից և այդ գանձը։ Դառնացած աշխարհում տիրող անարդարությունից, նախրորդը կտակում է, որ իր զավակի անունը անպայման Դատ-բեղատ (Վերջ և արդարություն) դնեն։ Այդպես էլ անում են։ Չափահաս դառնալով, Դատ-բեղատը սկսում է զբաղվել նախրորդությամբ, ուխտելով ինչ գնով էլ լինի լուծել հոր վրեժը։ Խախտելով թագավորի սահմանած կարգը, Դատ-բեղատը մութ գիշերներին ճրագ է վառում իր խրճիթում։ Թագավորը կարգա-

դրում է պատժել ըմբոստ նախրորդին, սակայն վերջինս ազատվում է թագավորի մարդկանց հետապնդությունից, սպանում է կողոպտիչ ռեսին և տեր է դառնում իր հոր գտած գանձին։

Տվյալ հեքիաթի մեջ գեղարվեստական խոր ընդհանրացմամբ խորհրդանշված է մահու և կենաց այն ցասկոտ պայքարը, որ մղել է հայ ժողովուրդը դարերի ընթացքում կյանքում գոյություն ունեցող սոցիալական աղաղակող անարդարությունների դեմ, հանուն արդարության և իրավահավասարության։

Նույն կարգի ստեղծագործություններ են նաև հայկական հայտնի հեքիաթներից՝ «Ինչպար Օհանի տղան», «Վերմակիդ համեմատ ոտներդ մեկնիր», «Իմաստուն ջուլհակը» (հատկապես սրա առաջին մասը՝ դազգահին ամրացված թելերով օրորոցն ու եղեգնը շարժող ջուլհակի մասին), «Ցախահավաքը» (հատկապես սրա առաջին մասը՝ աղքատի ձեռք բերած հարստության ու իշխանության և վերջիններիս կորուստի մասին), «Աղքատին պաշ տվող կինը», «Պոչով սուտը», «Թագավորի հարցերին պատասխանողը», «Վեզիրի մի շահին», «Սլիկ երեցը», «Նոքար Սիմոնը» և այլն։

Վերոհիշյալ ստեղծագործությունների մեջ մեր աչքի առջև հառնում են Հայաստանի ձյունագագաթ լեռներն ու խոր կիրճերը, բարձրադիր լճերն ու գետերը, կանաչ արոտավայրերն ու խանձված դաշտերը, երկրի ուրույն բուսական ու կենդանական աշխարհի հետ միասին։ Նույն այդ հեքիաթներում մենք տեսնում ենք աշխատավոր հայ շինականին ու արհեստավորին, իրենց ապրուստով ու հագուստով, վարք ու բարքով, հավատալիքներով ու հասկացություններով, հայրենի ու օտար հարստահարիչներից կրած անլուր տառապանքներով, վերջիններիս դեմ մղած անդուլ պայքարով, իրենց ինքնօրինակ բնափիլիսոփայությամբ ու կենսափիլիսոփայությամբ։

5.

Մեծ է առհասարակ հեքիաթների, այդ թվում նաև հայկական հեքիաթների, ինչպես դաստիարակչական, այնպես էլ պատմա-ճանաչողական և գրական-գեղարվեստական արժեքն ու նշանակությունը։ Հեքիաթները ժողովրդի համար միայն հաճելի ժամանցի առարկա չեն եղել, որոնցով նա կարճել է ձմռան երկար ու ձանձրալի գիշերները, փարատել ցերեկվա ծանր առօրյայի ճնշիչ տպավորությունը։ Նրանք կատարել են հասարակական լայն զանգվածների լավագույն ձգտումների ու իղձերի յուրահատուկ հաղորդիչի դերը, ամրապնդել են նրանց նվիրական ավանդները իրար հաջորդող սերունդների գիտակցության մեջ։ Հեքիաթների միջոցով ժողովուրդը դրսևորել է այն ոգորումները, որ մղել է ինքը բնության տարերային ուժերի հաղթահարման համար, արտահայտել իր մտորումները, որոնել է իր կրած անլուր տառապանքների պատճառները, պայքարի կոչ է արել ամեն տիպի բռնության, ճնշման, անարդարության ու շահագործման դեմ։

Մարդիկ դարեր շարունակ ոգևորվել են հեքիաթների հերոսների խիզախության, անվեհերության, խելքի ու հնարամտության հիանալի օրինակներով, դժվարությունները հաղթահարելու մեծ կամքով, չքավորներին ու ընկածներին զորավիգ կանգնելու ազնիվ ձգտումով, արդարությունը պաշտպանելու և ճշմարտությանը հասնելու անձնազոհ պատրաստակամությամբ, ջանադիր աշխատասիրությամբ, հավատարմությամբ և անձնազոհությամբ։

ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերի հետ միասին, հեքիաթները շնորհակալ ու հարուստ նյութ են տալիս ժողովրդի հոգեբանությունը, նրա իղձերն ու ակնկալությունները, նրա բուն պատմությունը ուսումնասիրելու համար։

Գալով խոր հնադարից, հեքիաթների լավագույն նմուշները այսօր էլ չեն կորցրել իրենց հմայքն ու ուժը և գեղարվեստական մեծ բավականություն են պատճառում մարդկանց։ Նրանք ունեն յուրահատուկ «անհասանելի նորմայի» նշանակություն, այնքանով, որքանով որ բանաստեղծական բարձր ձևերի մեջ կերպավորում են ժողովրդի դարավոր մտքերն ու զգացմունքները, մարդկության «անկրկնելի մանկությունը»[11]։

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ СКАЗКИ

Член-корр. АН Арм. ССР А. Т. ГАНАЛАНЯН

(Р е з ю м е)

Большую часть сказок составляют те произведения, параллели которых наличествуют в устном фольклоре различных в этническом и географическом отношениях наций и существование которых в основном объясняется идентичностью пройденного этими нациями пути исторического развития. Такими произведениями являются известные армянские сказки «Азаран блбул», «Охик», «Джико» и др.

Среди сказок имеются также чисто местные или национальные произведения. Это те сказки, параллели которых у других народов отсутствуют и которые отображают естественные условия данной страны, специфическую судьбу ее жителей, их быт, обычаи, отличительные черты национального характера. Таковы известные армянские сказки «Змея и нищий», «Сын крестьянина Огана», «Дат и бедат» и др.

В сказках отображены лучшие чаяния и мечты народа об изобилии, счастье, мире, свободной жизни; в них нашли свое выражение действия человека во имя осуществления этих чаяний, преодоления злых сил окружающей природы и общественной жизни.

Велики воспитательная, познавательная и художественная ценность и значение сказок. Люди в течение веков воодушевлялись лучшими примерами доблести, бесстрашия, ума, находчивости их героев. Сказки дают богатейший материал для изучения психологии, чаяний, стремлений, эстетических взглядов народа, его подлинной истории. Возникнув в глубокой древности, лучшие образцы сказок и сегодня восхищают своей очаровательной силой и доставляют большое эстетическое наслаждение.

[10] Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, Երևան, 1948, էջ 270 – 272։